ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 հոկտեմբերի շաբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

138
(2618)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 103

2 օրից Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարները կսկսեն խաղաղության պայմանագրի տեքստի քննարկումները: Երեկ Հանրային հեռուստաընկերության եթերում այս մասին հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Նկատենք՝ դեռ սեպտեմբերի 14-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը խոսել էր խաղաղության պայմանագրի մասին եւ հետո ԱԱԾ-ի շուրթերով հերքել այն: Խոսքը ՀՀ ԱԺ-ում ունեցած իր ելույթի մասին էր: «Մենք ուզում ենք ստորագրել մի թուղթ, որի արդյունքում մեզ լիքը մարդ կքննադատի, կհայհոյի, դավաճան կասի, նույնիսկ կարող է ժողովուրդը որոշի մեզ իշխանությունից հեռացնել, էլի գոհ, շնորհակալ կլինենք, եթե դրա արդյունքում ՀՀ-ն՝ 29.800 քկմ տարածքով, ստանա տեւական խաղաղություն եւ անվտանգություն: Ես շատ հստակ ասում եմ՝ այն որոշումը, որ սա ապահովելու է, ես այդ որոշումը ստորագրելու եմ. ինձ չի հետաքրքրում՝ ինչ կլինի հետո ինձ հետ, ինձ հետաքրքրում է՝ ինչ կլինի հետո ՀՀ-ի հետ»,- հայտարարեց Փաշինյանը՝ հավելելով՝ ուրախ ու հպարտ է, որ ՀՀ-ում կա թիմ, կա խորհրդարանական մեծամասնություն, որը հնարավորություն է տալիս իրեն այդ պատասխանատվությունը կրելու: Հենց նրա այս ելույթից հետո շրջանառվեց խաղաղության պայմանագիր ասվածը, որի մասին նաեւ Փաշինյանը նշեց եւ ժամեր անց հերքեց՝ ասելով. «Պաշտոնապես ասում եմ՝ թուղթ չեմ ստորագրել, որովհետեւ եթե ստորագրեի, կտեղեկացնեի, եւ չեմ պատրաստվում ստորագրեմ, եւ ընդհանրապես նման խոսակցություն չկա»: Նույն օրը ԱԱԾ-ն տարածեց մի հայտարարություն, որում ասվում էր. «Վարչապետի խոսույթը վերաբերել է բացառապես Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգությունը, ինքնիշխանությունը եւ կայուն խաղաղությունն ապահովող փաստաթղթի ստորագրման պատրաստակամությանը, որին պետք է ձգտել»: Երեկ պարզվեց, որ վաղը, երբ ԱԳ նախարարները հանդիպեն, հաշտության պայմանագրի շուրջ քննարկումներ կլինեն, հետեւաբար Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ խաբել ու մանիպուլացրել է:

Սեպտեմբերի 28-ին ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցած վարչապետ Նիկոլ Փաշինյանի ու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների հանդիպումը բավականին բուռն է անցել: «Ժողովուրդ» օրաթերթը երկու օր շարունակ ՔՊ-ական պատգամավորներից մեկնաբանություն էր խնդրում՝ հասկանալու՝ ի վերջո ինչ են քննարկել Փաշինյանի հետ: Պատգամավորները, սակայն, հանդիպման մասին որեւէ մեկնաբանություն լրատվամիջոցներին չեն տալիս: «Ժողովուրդ» օրաթերթին, այնուամենայնիվ, հաջողվեց պարզել՝ երեք ժամից ավելի պատգամավորներն ինչ են քննարկել իրենց քաղաքական առաջնորդի հետ: «Հարցերը եղել են, ամեն մեկն իր սուրբ պարտքն է համարել լուրջ ու անհանգստացած դեմքով հարց ուղղել Փաշինյանին: Ռազմական դրություն հայտարարելու կամ դրա մասին խոսակցություն առհասարակ չի եղել: Փաշինյանը ներկաներին տեղեկացրել է՝ Ռուսաստանը կարծես թե դեմ չէ, որ Հայաստանը մեկ այլ երկրից զենք բերի: Ուրախությամբ տեղեկացրել է նաեւ, որ այս պահին զենք ձեռք բերելու մասով մի քանի երկրի հետ նախնական պայմանավորվածություններ ունեն: Բայց թե որ երկրների մասին է խոսքը, չի մանրամասնել»,- տեղեկացրեց ՔՊ-ամերձ մեր աղբյուրը: Այդ օրը խոսվել է նաեւ ՀԱՊԿ-ից դուրս գալու հավանականության ու ՌԴ-ի հետ հարաբերությունները վերանայելու մասին: Փաշինյանը հենց սկզբից ընդգծել է՝ Ռուսաստանի հասցեին խիստ ու կոշտ արտահայտվել չեն կարող, քանի որ դա տնտեսական մի շարք «ապտակներ» կարող է արժեալ՝ գազի գնի վերանայումից մինչեւ ցորենի ներմուծում: Իշխանականները քննարկել են նաեւ Արցախի կարգավիճակի հարցը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հանդիպման ժամանակ ընդգծվել է, որ Արցախի իշխանություններին պետք է թողնել բանակցային հարցը: Այսինքն՝ ենթադրել կարելի է, որ Արցախի հարցով հաջորդ բանակցություններում նաեւ Արցախը ներառված կլինի, բայց կբացակայի Հայաստանը: Այն, ըստ երեւույթին, տեղի կունենա Արցախ-Ռուսաստան-Ադրբեջան ձեւաչափով:



ՀՀ Ազգային ժողովի աշխատանքը դարձել է իսկական գլխացավանք ինչպես իշխանության, այնպես էլ ընդդիմության համար: Բանն այն է, որ ընդդիմությունը թեեւ հայտարարել է, որ սեփական օրակարգով միայն խորհրդարանի դահլիճ կմտնի, սակայն մինչ օրս չի հաջողվում հաղթահարել շատ արգելքներ եւ մտնել դահլիճ ու կողք կողքի նստել ՔՊ խմբակցության անդամների հետ: Այդպես հարցը առկախվել է: Իշխանության համար եւս պրոբլեմ է, քանի որ, «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները վստահեցնում են, եվրոպական մի շարք այլ երկրների, ԱՄՆ-ի ներկայացուցիչներ ՔՊ-ականների հետ ամենատարբեր հանդիպումների ժամանակ պահանջ են դնում ապահովել ԱԺ-ի բնականոն գործունեությունը: Դա նշանակում է, որ խորհրդարանում պետք է ներկայացված լինեն եւ ընդդիմադիրները, եւ իշխանության ներկայացուցիչները, լինեն կարծիքների բախումներ: Իշխանությունն էլ փակուղու մեջ է. չեն կարող ընդդիմադիրներին համոզել գալ խորհրդարան, բայց չեն էլ կարող երկար ժամանակ մոնոլոգի վերածված նիստեր անցկացնել, իրենք խոսեն, իրենք լսեն: Իշխանությունն, իհարկե, պատժամիջոցներ կիրառում է փողոցում պայքարի դուրս եկած ընդդիմադիրների նկատմամբ, բայց դեռ անարդյունք: Սեպտեմբերին եւս ընդդիմադիր պատգամավորները, ինչպես նախորդ ամիսներին, չեն ստանա իրենց հասանելիք աշխատավարձը, իսկ իշխանական պատգամավորները պարբերաբար ստանում են ոչ միայն ամբողջական աշխատավարձը, այլեւ պարգեւավճարներ:



ՀՀ իշխանությունները կամ ռազմական գերատեսչության ներկայացուցիչները խուսափում են հստակ ասել, թե սեպտեմբերի 13-ից Ադրբեջանի կողմից սկսված ռազմական գործողություններից հետո Հայաստանն այժմ ինչ տարածքային կորուստներ ունի, որքան մարտական դիրք ենք կորցրել կամ հետ վերադարձրել: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական հարցում էր ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարություն հետեւյալ բովանդակությամբ. «Այս պահի դրությամբ խնդրում եմ տրամադրել հստակ տվյալներ կամ քարտեզ՝ ինչպիսի դիրքային առավելություններ ունի հակառակորդ կողմը, ինչպիսի առավելություններ ու կորուստներ ունի հայկական կողմը: Ինչքա՞ն հատվածներ է օկուպացրել ադրբեջանական կողմը հայկական տարածքներից»: Ի պատասխան՝ Պաշտպանության նախարարությունից հայտնել են ոչինչ չասող մի նախադասություն. «Ներկա պահին ընթանում են ճշգրտման, համադրման եւ վերլուծության անհրաժեշտ աշխատանքներ, որի արդյունքներով կներկայացվեն համապատասխան տեղեկություններ»: Այսինքն՝ 17 օր է անցել զինված ագրեսիայից, որն իրականացվեց Հայաստանի սուվերեն տարածքի նկատմամբ, սակայն դեռ ՊՆ-ն վերլուծում է: Նշենք, որ նախօրեին Գեղարքունիքի մարզում ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ Առաքել Մարտիկյանին ՀՀ սահմանների վերաբերյալ հարց ուղղեց նաեւ Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Ն.Գ. Անն Լյոյոնը, սակայն Մարտիկյանը կրկին խուսափողական պատասխան տվեց: Հետաքրքիր է՝ ինչու է Պաշտպանության նախարարությունը թաքցնում իրականությունը:

ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾ Է՝ ՄԵԾ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ

ՀՀ տարածային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում չհամաձայնեց այն մտքի հետ, թե ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհների վերանորոգման կամ կառուցման հարցում ՀՀ իշխանությունները թերանում են: Մասնավորապես՝ նախարարից հետաքրքրվել էինք, թե ինչպես է դատահում, որ Ադրբեջանն այդ հարցում ակտիվ է, հատկապես՝ 44-օրյա պատերազմից հետո, իսկ Հայաստանը դանդաղում է:

Գնել Սանոսյանը նախկինում ՀՀ Գեղարքունիքի մարզպետն էր, նրանից նաեւ հետաքրքրվել ենք, թե ինչու մարզպետ, ապա նաեւ նախարար լինելով՝չի զբաղվել սահմանների կահավորմամբ:

Դեռ 2021 թվականի մայիսին սահմանների կահավորման հարցը բարձրաձայնում էր նաեւ պատգամավոր Թագուհի Թովմասյանը, իսկ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասում էր, թե ամեն ինչ էլ արվում է: Նիկոլ Փաշինյանը տվեց խուսափողական պատասխան՝ ընդամենը ասելով, որ ոչ միայն ադրբեջանցիները, այլեւ Թովմասյանը չեն կարող տեսնել այն ամենը, ինչ արվում է. «Արվողի հսկայական մեծամասնությունը արվում է գաղտնի: Այն առաջնագիծը, որը տեսանելի է, կանխատեսելի է, մատչելի է, վատ առաջնագիծ է»: Սակայն իրականությունն այն է, որ կահավորումը պատշաճ չի կատարվել:

-Պարոն Սանոսյան, ռազմավարական նշանակության ճանապարհներն ինչո՞ւ արագ կերպով չեն նորոգվում:

-Ես կառավարության նիստում մշտապես խոսում եմ հանրապետական նշանակություն ունեցող ճանապարհների եւ ավելի քիչ տեղական նշանակություն ունեցող ճանապարհների մասին: Եթե մենք վերցնենք ու նայենք մեր կառուցվող ճանապարհները, ապա կտեսնենք, որ միջպետական եւ հանրապետական նշանակություն ունեցող ճանապարհները գերակշռում են: Բոլոր ուղղություններով էլ մենք մեծ ծավալի աշխատանքներ ունենք: Դուք գիտեք՝ մենք հստակ թիրախ ունենք դրված մեր առջեւ, կարող եմ ասել, որ այս տարի կիրականացնենք այդ նպատակը: Նույնիսկ եթե որոշ հանգամանքներ չխանգարեն, կարող ենք ավելին անել. իրականության մեջ 700 կմ ճանապարհի վրա աշխատանքներ ենք կատարում, սակայն հանգամանքների բերումով բոլորը չենք կարող հասցնել իրականացնել:

-Ինչո՞ւ, ո՞րն է պատճառը, որ դանդաղում ենք, իսկ, օրինակ, մեր թշնամին շատ արագ է գործում:

-Ես չէի ասի՝ մենք դանդաղում ենք: Ուրիշ բան է, որ կառավարությունն ունի մեծ ցանկություն ավելի շատ աշխատանք անելու, սակայն, ցավոք սրտի, մեր շինարարական պոտենցիալն այդքան մեծ չէ: Սակայն պետք է արձանագրել, որ վերջին տարիներին այդ պոտենցիալը բավական մեծացել է, եւ եթե հինգ տարի առաջ մենք 70 կմ ճանապարհի մասին էինք խոսում ամբողջ երկրով, ապա Դուք լսում եք, որ ես հիմա խոսում եմ 700 կմ ճանապարհի մասին այն էլ այն դեպքում, երբ 200-250 կմ էլ սուբվենցիայով է կառուցվում:

-Պարոն Սանոսյան, Դուք նաեւ Գեղարքունիքի մարզպետ եք եղել, Ձեզ սահման այցի ժամանակ գոհացրե՞լ է իրավիճակը սահմանների կահավորման մասով: Արդյոք անհրաժեշտ չափով կահավորվա՞ծ են սահմանները:

-Սահմանների կահավորման մանրակրկիտ բացատրությունը ես չէ, որ պետք է տամ: Որոշակի պատկեր նշեմ. այն սահմանագիծը, որի կահավորումը մենք ակնկալում ենք, որ արվի եւ արվում է, դա նոր սահմանագիծ է՝ բավական մեծ երկարությամբ: Եվ այդ ամբողջ հատվածում պատերազմից հետո հսկայական աշխատանք է տարվել: Արդյոք կա՞ այլ աշխատանք. իհարկե կա, քանի որ նոր գոտի է, եւ այնտեղ մշտապես նոր աշխատանքների կարիք կա: Դա անում եւ շարունակում է անել համապատասխան գերատեսչությունը:

-Դուք ինքներդ գո՞հ եք կատարված աշխատանքից:

-Ես ինքս կատարված աշխատանք եմ տեսել, ակնհայտ է փոփոխությունն օր օրի եւ ամեն ամիս, այնպես որ, դրական եմ գնահատում աշխատանքը:

Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ԲԱՆԱԿՑՈՒՄ Է

ՖՐԱՆՍԻԱՆ ԱՍՈՒՄ Է՝ ՈՎ Է ԱԳՐԵՍՈՐԸ

«Ֆրանսիան աշխատում է, որպեսզի ամբողջ միջազգային հասարակությունը ճիշտ գնահատի եւ մատնանշի, թե ով է ագրեսորը»,- երեկ՝ Գեղարքունիքի մարզ այցի ժամանակ, ArmLur.am-ի հետ զրույցում նշեց ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. տիկին Անն Լյույոնը: «Այստեղ իրավիճակն իսկապես լուրջ է, եւ Ֆրանսիան ու ԱՄՆ-ն հատկապես աշխատում են այս ուղղությամբ, որպեսզի մյուս երկրներն էլ ակտիվանան: Հատկապես մենք լուռ չենք, մենք ասել ենք, թե ով է ագրեսորը: Հուսով ենք՝ մյուս երկրներն էլ կտեսնեն, եւ այս իմաստով այս այցն իսկապես կարեւոր է»

-Տիկին դեսպան, ի՞նչ եք մտածում Գեղարքունիքի սահմանին տիրող իրավիճակի մասին:

-Իհարկե, այս ամենը շատ լուրջ է:

-Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի ճշմարտությունը հաղթի: Ինչպե՞ս կարող է հայկական կողմն ապացուցել, որ ագրեսոր երկիրը հենց Ադրբեջանն է:

-Ֆրանսիան աշխատում է այդ ուղղությամբ՝ օգնելու համար, որպեսզի այդ փաստերը հավաքվեն եւ ներկայացվեն: Մենք կարծում ենք, որ ամբողջ միջազգային հանրությունը պետք է աշխատի, որպեսզի իրական փաստերը ներկայացվեն: Հենց այդ պատճառով էլ բոլոր դեսպաններն այստեղ են, սա շատ լավ նախաձեռնություն է Հայաստանի կառավարության կողմից, որպեսզի միջազգային հանրությանը ցույց տան, թե իրականում ինչ է տեղի ունեցել այստեղ:

-Սակայն Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն ասում է, թե իրեն ոչինչ չի կարող կանգնեցնել, եւ կանի այն, ինչ ցանկանում է: Ինչպե՞ս կարող է աշխարհն ու միջազգային հանրությունը կանգնեցնել Ադրբեջանին:

-Հենց այդ ուղղությամբ էլ մենք աշխատում ենք Ֆրանսիան ու Ամերիկայի Միացյալ Նահանգները հատկապես եւ այլ դիվանագիտական ներկայացուցիչներ միջազգային հանրության կողմից: Այդ ուղղությամբ ճիշտ աշխատանքներ են տարվում:

-Բայց Հայաստանում այն տեսակետն է տիրում, թե աշխարհը լուռ է. ինչո՞ւ:

-Դա ճիշտ չէ: Ֆրանսիան շատ հստակ հայտարարել է, թե ով է ագրեսոր, ով է պատասխանատուն այս գործողությունների: Եվ մենք հուսով ենք, որ այլ երկրները եւս կմիանան մեզ, եւ այդ պատճառով էլ նման այցերն իսկապես կարեւորություն են ներկայացնում: Սա շատ լավ նախաձեռնություն է:

-ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասում է, թե իրավիճակի հանգուցալուծման համար անհրաժեշտ է, որպեսզի սահմանին միջազգային դիտորդներ տեղակայվեն: Ի՞նչ կասեք այս մասին:

-Այո, ես համակարծիք եմ: Այստեղ պետք է միջազգային դիտորդական առաքելություն տեղակայվի, եւ մենք աջակցում ենք այդ գաղափարին: Մենք արդեն խոսել ենք այլ երկրների հետ այս շատ կարեւոր հարցի մասին:

Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ԿԱՎԵԼԱՆԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ

«2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է զգալիորեն ավելացնել անվտանգային եւ տնտեսական ենթակառուցվածքների բարելավմանն ուղղվող կապիտալ ծախսերը. դրանք կկազմեն 557 մլրդ դրամ, ինչը մոտ 200 մլրդ դրամով ավելի է, քան սահմանվել էր 2022-ի պետբյուջեով»,- երեկ՝ կառավարության նիստի ժամանակ, նշել է ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը:

Միեւնույն ժամանակ տեղեկանում ենք, որ 2023 թվականի ծախսերի հանրագումարը կկազմի 2 տրլն 590 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 27.8 տոկոսը: «Այն 2022 թվականի պետբյուջեով հաստատված ծախսերը կգերազանցի 18.3 տոկոսով: Բացի այդ, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի ոլորտներին հատկացվող ֆինանսավորումը 2023-ին նախատեսվում է 250 մլրդ դրամի չափով, ինչը, նախորդ տարվա համեմատ, ավելի է 10,3 տոկոսով: Գիտությանը հատկացվող միջոցները կգերազանցեն 36 մլրդ դրամը, ինչը ավելի քան 6,5 մլրդ դրամով ավելի է, քան այս տարվա համար սահմանված հատկացումներն են:

Նաեւ կառավարությունը նախատեսում է 2022 թվականն ամփոփել 11-12 տոկոս տնտեսական աճով: Ավելին, 2022 թվականի ութ ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշն է աճել 13.9 տոկոսով:

Հավելենք, որ «ՀՀ 2023 թ. պետբյուջեի մասին» օրինագիծն արդեն իսկ հավանության է արժանացել կառավարության կողմից եւ առաջիկայում կքննարկվի խորհրդարանում:

ՀՍՏԱԿՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

Սեպտեմբերի 25-ին Հայաստանի մի շարք համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ են կազմակերպվել, բայց մինչեւ այժմ, օրինակ, պարզ չէ, թե ով է լինելու Ալավերդի խոշորացված համայնքի ղեկավարը:

Ասյտեղ իշխող «Քաղաքացիական պայմանագիր»-ը ստացել է 13 մանդատ, «Ապրելու երկիր»՝ 13, ՀԱԿ-ը՝ 1: Վճռորոշ ձայնը ՀԱԿ-ն է ասելու, որոշելու, թե ում հետ է միավորվում ու ում հետ է կոալիցիա կազմում:

Մինչեւ այս պահը դեռ հստակ չէ, թե, ի վերջո, ինչ որոշում կկայացնի ՀԱԿ-ը, որն Ալավերդի քաղաքի կառավարումը կստանձնի:

Նշենք, սակայն, որ օրեր առաջ թե՛ ՔՊ-ի, թե՛ ԱԵ-ի թեկնածուները Facebook-ի իրենց էջերում գրառումներ են կատարել՝ասես հուսալով, որ ՀԱԿ-ը հենց իրենց է քվեարկելու:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿԲԱԽՎԵՆ ԽՆԴՐԻ

Եվրամիության երկրները 6-8 ամսից կարող են նավթամթերքների պակասի ու դրանց գների կրկնակի բարձրացման հետ առնչվել: Այս մասին գրում է ռուսական Ведомости լրատվականն ու հաղորդում՝ հղում անելով Ռուսաստանի էներգետիկ գործակալությանը:

Ըստ Եվրոպական վիճակագրական ծառայության տվյալների՝ սեպտեմբերի 19-ի տվյալներով՝ ԵՄ-ում 1 լիտր բենզինի միջին գինը կազմել է 1.76 եվրո, 1 լիտր դիզելինը՝ 1.8 եվրո: ԵՄ-ում բենզինի արժեքը, փետրվարի համեմատ, երբ սկսվել է ռուս-ուկրաինական պատերազմը, աճել է 2.9%-ով, դիզելային վառելիքը թանկացել է 15.4%-ով:

Նշենք, որ մարտի սկզբին էր Bloomberg-ն էր գրել, որ Գերմանիայի բենզալցակայաններում դիզվառելիքը 15 տարվա մեջ առաջին անգամ գերազանցել է բենզինի արժեքը:

Բրիտանական The Sun թերթը հուլիսին գրել էր, որ բենզինի գների բարձրացման պատճառով Մեծ Բրիտանիայի բնակիչների առնվազն 10%-ը հրաժարվել է արձակուրդային ծրագրերից, իսկ վարորդների ավելի քան 12%-ը, ըստ հրապարակման, դադարել է մեքենայով աշխատանքի գնալ:

ՍՏՈՐԱԳՐԵԼ Է ԱԶԱՏՈՒՄԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը սեպտեմբերի 29-ին որոշում է ստորագրել, ըստ որի՝ ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավարը պաշտոնից ազատվել է:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Գեղամ Շախբազյանին ազատել քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնից»,- ասված է որոշման մեջ:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել է, որ Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Արթուր Ասոյանը ազատման դիմում է գրել: Տեղեկությունը անձամբ մեզ հետ զրույցում հաստատեց նա՝ նշելով, որ կա նման բան: Մեր այն հարցին՝ ինչն է պատճառը, հայտնեց, որ պաշտոնից հեռանալը այլ աշխատանքի անցնելու հետ է կապված:

Ավելացնենք, որ վարչապետի աշխատակազմը վաղուց է որոշել տեսչականի պետին ու գրեթե բոլոր տեսչությունների ղեկավարներին ազատել ու իրենց սրտի թեկնածուներին նշանակել այդ պաշտոններում:

Հավելենք, որ ՔՏՀԱ տեսչական մարմնի ղեկավարի՝ պաշտոնից ազատումը կապված է «Սուրմալու» առեւտրի կենտրոնի պայթյունի հետ:

ՎՆԱՍԵԼ Է ՁԵՌՔԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Մարտունի քաղաքում ուշագրավ դեպք է եղել: 27 տարեկան աղջիկն ընկերոջ հետ վիճել է հեռախոսով, որից հետո հարազատները նկատել են, որ նա խոհանոցային դանակով վնասել է ձախ ձեռքը: Հարազատները նրան շտապ տեղափոխել են հիվանդանոց, վիճակը նորմալ է:

ՊՈՒՏԻՆԻ ԵԼՈՒՅԹԸ

4 ՏԱՐԱԾՔՆԵՐ ՄԻԱՑԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ «Հյուսիսային հոսքի» հետ կապված միջադեպերը դիվերսիա էին, որի հետեւում կանգնած են արեւմտյան երկրները:

«Պատժամիջոցներն անգլոսաքսոնների բավարար չեն, նրանք դիվերսիաների են անցել: Անհավատալի է, բայց փաստ: Բալթիկ ծովի հատակով անցնող «Հյուսիսային հոսք»-ի միջազգային գազատարների վրա պայթյուններ կազմակերպելով՝ նրանք փաստացի սկսել են ոչնչացնել համաեվրոպական էներգետիկ ենթակառուցվածքը»,- ուրբաթ Ռուսաստանի Դաշնության կազմ նոր սուբյեկտների ընդունման մասին պայմանագրերի ստորագրման արարողության ժամանակ ասել է ՌԴ նախագահը:

«Բոլորին էլ պարզ է, թե ում է դա ձեռնտու: Ում ձեռնտու է, նա էլ, իհարկե, արել է»,- ընդգծել է նա:

Պուտինը նաեւ նշել է, որ «ԱՄՆ թելադրանքը կառուցված է բիրտ ուժի, բռունցքի օրենքի վրա՝ երբեմն գեղեցիկ փաթեթավորված, երբեմն առանց որեւէ փաթեթավորման, բայց էությունը նույնն է՝ բռունցքի օրենք»:

Սեպտեմբերի 26-ի գիշերը «Հյուսիսային հոսք 2» խողովակաշարի գծերից մեկում արտահոսք էր տեղի ունեցել: Միջադեպը գրանցվել էր Դանիայի բացառիկ տնտեսական գոտում՝ Բորնհոլմ կղզուց հարավ-արեւելք: Գազի արտահոսք է գրանցվել նաեւ Բորնհոլմից հյուսիս-արեւելք գտնվող առաջին «Հյուսիսային հոսքի» երկու գծերից:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հիշեցրել է, որ ԱՄՆ-ն առաջինն է միջուկային զենք կիրառել՝ երկու ռումբ նետելով ճապոնական Հիրոսիմա եւ Նագասակի քաղաքների վրա:

ԱՄՆ-ն միակ երկիրն է աշխարհում, որը երկու անգամ միջուկային զենք է կիրառել՝ ոչնչացնելով ճապոնական Հիրոսիմա եւ Նագասակի քաղաքները: Ի դեպ, նախադեպ են ստեղծել:

Նրա խոսքով՝ ԱՄՆ-ն նաեւ «սարսափելի հետք է թողել» Կորեայի ու Վիետնամի պատմության մեջ, իսկ այսօր նրանք փորձում են «օկուպացնել Գերմանիան ու Հարավային Կորեան իրավահավասարության մասին հայտարարությունների ներքո»:

Ռուսաստանը չի ձգտում վերականգնել Խորհրդային Միությունը. դա նրան պետք չէ: Այդ մասին ուրբաթ օրը հայտարարել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը՝ ելույթ ունենալով Ռուսաստանի կազմում չորս նոր մարզերի ընդունման արարողության ժամանակ:

Խորհրդային Միություն չկա, անցյալ չկա: Այո, եւ այսօր Ռուսաստանին դա այլեւս պետք չէ, մենք դրան չենք ձգտում: Սակայն չկա ավելի ուժեղ բան, քան միլիոնավոր մարդկանց վճռականությունը, ովքեր իրենց մշակույթով, հավատքով, ավանդույթներով, լեզվով իրենց Ռուսաստանի մաս են համարում:

Պուտինը Կիեւին կոչ է արել անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները եւ վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ: «Մենք Կիեւի ռեժիմին կոչ ենք անում անհապաղ դադարեցնել կրակը, բոլոր ռազմական գործողությունները, պատերազմը, որը նա սանձազերծել էր դեռ 2014-ին, եւ վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ»,- ասել է նա՝ նշելով, որ Ռուսաստանը բազմիցս հայտարարել է բանակցություններ վարելու պատրաստակամության մասին:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը եւ Դոնեցկի եւ Լուգանսկի Ժողովրդական Հանրապետությունների, Զապորոժյեի եւ Խերսոնի մարզերի ղեկավարները պայմանագրեր են ստորագրել այդ մարզերի՝ Ռուսաստանին միանալու վերաբերյալ:

Արարողությունը տեղի է ունեցել ուրբաթ Կրեմլի մեծ պալատի Գեորգիեւսկի դահլիճում: Փաստաթղթերի ստորագրումից առաջ Պուտինը ելույթ է ունեցել այդ տարածքների՝ Ռուսաստանի կազմ ընդունման մասին:

Օրեր առաջ ԴԺՀ-ի, ԼԺՀ-ի, Զապորոժիեի եւ Խերսոնի շրջաններում հանրաքվեներ են անցկացվել Ռուսաստանի Դաշնությանը միանալու վերաբերյալ, բնակիչները ձայների մեծամասնությամբ պաշտպանել են այդ որոշումը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ

Հոկտեմբերի 2-ին Ժնեւում տեղի կունենա Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպումը:

Այս մասին հայտնում է ՀՀ ԱԳՆ մամուլի քարտուղար Վահան Հունանյանը:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՌԱՔԱՐԿՆԵՐ

2016-2021 թվականներին Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ ապրանքաշրջանառությունն աճել է գրեթե երկու անգամ՝ 1,35 միլիարդ դոլարից հասնելով 2,6 միլիարդի: Ընդ որում՝ այդ աճը շատ հավասարակշռված է. գրեթե կրկնապատկվել է ինչպես Ռուսաստանի արտահանումը Հայաստան, այնպես էլ Ռուսաստանի ներկրումը Հայաստանից: Առեւտրի նման աճը հնարավոր է դարձել 2015 թվականին Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միությանը միանալու շնորհիվ: Այս մասին ասել է Ռուսաստանի Դաշնության փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը:

«Հայաստանում աշխատում են ավելի քան 40 խոշոր ռուսական ընկերություններ: Նրանք նաեւ խոշոր հարկատուներ են, այսինքն՝ զգալի չափով ապահովում են երկրի բյուջեի եկամտային մասը:

Մենք շահագրգռված ենք հետագայում եւս զարգացնել փոխադարձ առեւտուրը եւ ներդրումները: Ռուսական բիզնեսը պատրաստ է զարգացման արդյունավետ լուծումներ առաջարկել տրանսպորտային, էներգետիկ, սոցիալական ենթակառուցվածքների, թվային տնտեսության ոլորտներում: Հայաստանի համար կարող են հետաքրքրություն ներկայացնել քաղաքացիներին թվային պետական ծառայությունների մատուցման ոլորտում մեր որոշումները»,- նշել է Օվերչուկը:

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Հայաստանի ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը եւ Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը Վաշինգտոնում կմասնակցեն Համաշխարհային բանկի խմբի եւ Արժույթի միջազգային հիմնադրամի տարեկան հանդիպումներին:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել ԱՄՆ պատվիրակություն գործուղելու մասին:

ՀՀ ֆինանսների նախարարն ու Կենտրոնական բանկի նախագահն ԱՄՆ-ում կլինեն հոկտեմբերի 10-17-ը:

ՀԱՄԱՑԱՆՑ

ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

Վերջին ժամանակներում կտրուկ աճել են համացանցային առուվաճառքի հարթակներում ադրանքների վաճառքի հայտարարություններն օգտագործելով խարդախությամբ կատարված հափշտակության դեպքերը: Այս մասին են վկայում 2022 թվականի ընթացքում արձանագրված սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի վերաբերյալ Գլխավոր դատախազությունում ստացված հաղորդումների ուսումնասիրությունը:

Առերեսույթ հանցավոր արարք կատարող անձինք WhatsApp կամ այլ չվերահսկվող կապի միջոցներով կապ են հաստատում համացանցային առուվաճառքի հարթակներում (օրինակ՝List.am) տարատեսակ ապրանքներ վաճառողների հետ եւ, հայտարարությամբ տեղադրված ապրանքները գնելու դիմաց էլեկտրոնային եղանակով վճարում կատարելու պատրվակով, նրանցից պահանջում ու ստանում են վերջիններիի բանկային քարտերի տվյալները, որից հետո, այդ տվյալներն օգտագործելով, հափշտակում են դրանց հաշվին առկա գումարը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ գրանցվել են նմանատիպ դեպքերի երկու տեսակ: Մի դեպքում, ապրանքների վաճառքի վերաբերյալ հայտարարությունը առուվաճառքի նման հարթակներում տեղադրվելուց հետո արտերկրյա կամ տեղական հեռախոսահամարներով գրանցված WhatsApp հավելվածի միջոցով անհայտ անձինք կապ են հաստատում հայտարարություն տվողի հետ եւ խնդրում տրամադրել նրանց բանկային քարտի տվյալները ապրանքը գնելու եւ գումարը բանկային քարտին փոխանցելու համար: Վերջիններս «գնորդին» տրամադրում են իրենց բանկային քարտի տվյալները, այդ թվում՝ կոդերը, որից հետո հանցագործների կողմից խաբեությամբ նրանց բանկային քարտից կանխիկացվում են եղած գումարները: Մյուս դեպքում հանցագործները, առցանց վաճառքի հանված ապրանքը գնելու պատրվակով, նույն միջոցներով կապ են հաստատում հայտարարություն տվողների հետ, ցանկություն հայտնում գնել ապրանքը, սակայն պատճառաբանելով, թե, իբր, այլ բնակավայրում են բնակվում, նրանք առաջարկում են «Հայփոստի» միջոցով կնքել էլեկտրոնային պայմանագիր, ըստ որի՝ վերջինս կատարում է որոշակի գումարի վճարում, իսկ դրա դիմաց առաքիչն ապրանքը տեղափոխում է տվյալ բնակավայր: Ապա հանցավորներն ուղարկում են այսպես կոչված «Հայփոստի» ծուղակային հղում, որտեղ անձինք գրանցվում են՝ գրանցելով նաեւ բանկային տվյալները եւ կոդերը, որից անմիջապես հետո պարզում են, որ հղումը կեղծ է, եւ իրենց վստահությունը չարաշահել են: Հանցավորը, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, կեղծ հղումով ստացված բանկային տվյալները ներբեռնելով, կարողանում է բանկոմատային քարտում եղած գումարը այլ խաղային կամ անձնական հաշիվների փոխանցելով հափշտակել դրանք: Դեպքերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է նաեւ, որ հանցավոր արարքները կատարողները գործում են նախօրոք մտածված սցենարով ու սխեմայով, առաջացնում շահագրգռվածություն անձի մոտ, որ տրամադրեն բանկոմատային քարտի պահպանվող տվյալները: Գնորդն առաջարկում է վճարել ապրանքի դիմաց՝ չսակարկելով վաճառվող առարկայի գինը, ինչը գայթակղում է վաճառողին հանցավորի «թակարդն ընկնել» ու նրա առաջարկը չմերժել՝ տրամադրելով իր կամ այլ ծանոթ կամ բարեկամի բանկոմատային քարտի պահպանվող տվյալները, որից հետո հանցավորը համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, այդպիսի տվյալները ներբեռնելով, կարողանում է ազատ օգտվել բանկոմատային քարտում եղած գումարից, փոխանցել այլ խաղային եւ անձնական հաշիվների՝ այսպիսով հափշտակելով դրանք: Արդյունքում բանկային քարտի սեփականատերը կամ վերջինիս հարազատը կամ մտերիմն ինքնակամ հանցավորին է տրամադրում բանկային քարտի պահպանվող տվյալները, որից էլ օգտվում են հանցավորները՝ հնարավորություն ստանալով իրագործելու իրենց հանցավոր դիտավորությունը: 2022 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում գրանցվել են նշված եղանակով կատարված հանցագործությունների 145 դեպքեր, որոնցից՝

- 134 դեպքով հանցավոր արարքներն ավարտվել են,
- 11 դեպքով հանցավոր արարքներն ավարտին չեն հասցվել հանցավորի կամքից անկախ պատճառներով՝ տվյալ բանկային քարտի հաշվին գումար չլինելու պատճառով:

Նշված դեպքերից՝

- 82-ով կայացվել են քրեական գործ հարուցելու մասին որոշումներ,
- 63-ով կայացվել են քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումներ:

Նշված 82 քրեական գործից բացահայտվել է ընդամենը երկուսը, որից մեկը կարճվել է տուժողի հետ կասկածյալի հաշտվելու հիմքով, իսկ մյուսն ընթացքի մեջ է:

Երկու քրեական գործերով վարույթները կարճվել են տուժողի բողոքի բացակայության հիմքով: Ընդհանուր վնասը կազմել է 18 մլն 147 հազար 818 դրամ:

Ընդ որում, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանցավորը կամ հանցավորները, որպես կանոն, գործում են մեկ միասնական դիտավորությամբ եւ օգտագործում են բազմաթիվ անձանց տվյալները, այսինքն՝ հանցավոր արարքն ընդգրկում է մեկից ավելի դրվագներ: Ուսումնասիրության արդյունքներից ելնելով՝ ՀՀ դատախազությունը քաղաքացիներին հորդորում է՝ ոչ մի դեպքում այլ անձանց չտրամադրել իրենց բանկոմատային քարտերի պահպանվող վավերապայմանները՝ դրանց վրա առկա թվերը, հատկապես PIN կոդը. նման դեպքում էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի պաշտպանվածությունն օբյեկտիվորեն կարող է անզոր լինել արգելելու հանցավորների հասանելիությունը քարտային դրամական միջոցներին:

ԼՈՒՐԵՐ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ԻՐԵՐԻ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 21-ին 1-02 ծառայություն զանգահարած քաղաքացին հայտնում էր, որ քիչ առաջ նկատել է, թե ինչպես են Երեւանի Վիկտոր Համբարձումյան փողոցի մի հասցեից գողանում թանկարժեք իրեր ու նկարներ: Հաղորդումը փոխանցվում է ոստիկանության Արաբկիրի բաժին, որտեղից օպերատիվ խումբը շտապ մեկնում է նշված վայր: Պարզվում է, որ այդ հասցեում հանգուցյալ մի նկարչի արվեստանոցն է, որի երկաթե դուռն անվնաս էր: Քիչ անց բաժնում հաղորդում է տալիս նկարչի դուստրը: Նա հայտնում է, որ վերջին երկու ամսվա ընթացքում հոր արվեստանոցից գողացել են յուղաներկով արված 350 կտավ, հնաոճ իրեր, այդ թվում՝ պղնձե երեք ինքնաեռ ու կավե կուժ, նաեւ թվային ֆոտոխցիկ: Դուստրն ուներ նաեւ որոշակի կասկածներ, թե ով կարող է կատարած լինել գողությունը: Հիմնավորումն այն էր, որ արվեստանոցի բանալին կար նաեւ նրա մոտ: Փաստի առթիվ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ, իրականացվեցին անհրաժեշտ անհետաձգելի միջոցառումներ, քննչական գործողություններ, առաջ քաշվեցին վարկածներ: Մանրակրկիտ ուսումնասիրվեց նաեւ նկարչի դստեր կասկածը, որն արագ հերքվեց: Ձեռք բերված սուղ տեղեկությունների պայմաններում Արաբկիրի քրեական հետախույզները ձեռնարկեցին օպերատիվ միջոցառումներ եւ հետեւողական աշխատանքի արդյունքում ի վերջո պարզեցին կատարողի ինքնությունը: Ահազանգից վեց օր անց՝սեպտեմբերի 27-ի առավոտյան, Վիկտոր Համբարձումյան փողոցում ձերբակալվեց ու բաժին տեղափոխվեց նույն փողոցի բնակիչ 34-ամյա մի տղամարդ: Նա ներկայացվեց վարույթն իրականացնող մարմին, որտեղ տվեց խոստովանական ցուցմունք: Գողոնը հայտնաբերվել է: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՓՈՐՁ

ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության Սյունիքի տարածաշրջանային բաժնի Մեղրիի բաժանմունքի աշխատակիցները Մեղրի մաքսային կետ-բաժնի մաքսային հսկողության գոտում զննման են ենթարկել ԻԻՀ-ից ՀՀ ժամանող Իրանի քաղաքացի Մ. Յ.-ին: Անձնական զննման արդյունքում քաղաքացու տաբատի գրպանում՝ ծխախոտի տուփի միջից, հայտնաբերվել է մաքսային հսկողությունից թաքցված, փայլաթիթեղի մեջ փաթեթավորված շագանակագույն զանգված: Հայտնաբերված շագանակագույն զանգվածը հանդիսացել է Մեթամֆեթամին տեսակի թմրամիջոց, իսկ բաճկոնի զննման արդյունքում ծոցագրպանից հայտնաբերվել է մաքսային հսկողությունից թաքցված 0.5լ տարողությամբ պլաստմասե շիշ՝ ամբողջությամբ լցված Մեթադոն տեսակի հեղուկ թմրամիջոցով: Մաքսանենգության դեպքի վերաբերյալ արձանագրությունը հայտնաբերված թմրամիջոցի զանգվածների հետ միասին տրամադրվել է ՀՀ ՊԵԿ քննչական վարչությանը, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշներով:

ԿԱՋԱՏԵՆ ՊԱՇՏՈՆԻՑ

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը պաշտոնից կազատի նաեւ ՀՀ գլխավոր դատախազության՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Արթուր Չախոյանին:

Հիշեցնենք, որ երեկ ՀՀ գլխավոր դատախազության՝ պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական Վաղինակ Ջանազյանն աշխատանքից ազատվելու դիմում է գրել:

Նորանշանակ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը ստորագրել է հրամանը՝ Վաղինակ Ջանազյանին հոկտեմբերի 3-ից աշխատանքից ազատելու վերաբերյալ:

Նշենք, որ նա հանրությանը առավել հայտնի է այլ քրեական գործով: Դեռեւս 2011 թվականին ՀՔԾ նախկին պետ Անդրանիկ Միրզոյանը որոշում էր կայացրել 2008թ. մարտի 1-ի գործով քննչական խմբի արդեն նախկին ղեկավար Վահագն Հարությունյանին այլ պաշտոնի տեղափոխել եւ նրա փոխարեն «Մարտի 1»-ի գործով քննչական խմբի ղեկավարման աշխատանքները հանձնել ՀՔԾ հատկապես կարեւոր գործերով ավագ քննիչ Վաղինակ Ջանազյանին:

Վաղինակ Ջանազյանն էլ ընդունել էր «Մարտի 1»-ի գործով վարույթը, որը քննել էր այդ տարիներին: «Մարտի 1»-ի գործը մինչ օրս բացահայտված չէ, փողոցում գնդակահարված քաղաքացիների սպանությունները ցայսօր չեն բացահայտվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

- *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 28-ից 29-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԿՈՉ՝ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՑ

2021թ. փետրվարի 26-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշումով Դիլիջան խոշորացված համայնքի ղեկավար նշանակված, իր անձնական գործերում իր սեռը «արու» գրած, ՔՊ կուսակցության Դիլիջանի տարածքային կառույցի ղեկավար Դավիթ Սարգսյանի ղեկավարած Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում սեպտեմբերի 27-ին նյութ է զետեղվել՝ «Սեպտեմբերի 27-ը 44-օրյա պատերազմում զոհվածների հիշատակի օրն է» վերնագրով: Այնտեղ բավական վիճահարույց եւ սխալ մտքեր կան, օրինակ՝ «Հայաստանում ու Արցախում այդ օրերին հայտարարվել էր ռազմական դրություն ու զորահավաք, բազմաթիվ հայորդիներ կամավոր մեկնում էին ռազմաճակատ՝ 44 օր շարունակ կենաց ու մահու կռիվ տալով՝ հայրենի հողը պաշտպանելու համար»: 44 օրվա ընթացքում Նիկոլ Փաշինյանը զորահավաք չհայտարարեց, Արցախում մարտնչող բանակը չհամալրվեց, եւ դա պատերազմում մեր պարտության պատճառներից մեկն էր: Այդ նյութի վերջում նշված է. «Իհարկե, այսօր բարդ ժամանակներում ենք ապրում, սակայն, սիրելի՛ հայրենակիցներ, պետք է գիտակցենք մեր միասնական ուժի ծավալը եւ պայքարենք միայն թշնամու դեմ»: Թշնամի ասելով՝ երեւի նկատի ունեն Նիկոլ Փաշինյանի կողմից կիրթ ու կառուցողական որակված Իլհամ Ալիեւի ղեկավարած Ադրբեջանը, որին Նիկոլ Փաշինյանը թշնամի չի համարում: Ըստ Դիլիջանի համայնքապետարանի՝ պետք չէ պայքարել Հայաստանում ժողովրդավարության հաստատման համար, իշխանության կամականությունների, օրենքի խախտումների դեմ, այլ միայն թշնամու դեմ:

ԽՂՃՈՒԿ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ

Կառավարությունն իր սեպտեմբերի 29-ի նիստում հավանություն տվեց «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխությունների նախագծին: Նախագծով առաջարկվում է 2023 թվականի հունվարի 1-ից ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձի չափը բարձրացնել՝ 68,000 ՀՀ դրամից դարձնելով 75,000 ՀՀ դրամ եւ, ըստ այդմ, սահմանել գործավարձով կամ ժամավճարով վարձատրվող կամ ոչ լրիվ աշխատաժամանակի ռեժիմով աշխատողների համար ժամային տարիֆային դրույքի նոր նվազագույն չափեր: Կառավարության այս որոշումը էական ազդեցություն չի ունենալու: Տավուշի մարզի բնակավայրերի մեծ խանութներում աշխատողներ կան, ովքեր օրական աշխատում են 10-12 ժամ, նույնիսկ՝ շաբաթ օրերը, սակայն վարձատրվում են 50-60 հազար դրամի չափով: Նրանց մի մասը որպես աշխատողներ ձեւակերպված չեն, նրանց համար գործատուն պետական բյուջե սոցիալական վճար չի մուծում: Տավուշի մարզի փոքր դպրոցներում ուսուցիչներ են աշխատում, որոնք, դրույքից պակաս դասաժամ ունենալով, ստանում են մոտ 60 հազար դրամ աշխատավարձ, ինչն ավելի քիչ է, քան նույն դպրոցի հավաքարարի ռոճիկը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԵՐՈՍԱԿԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ

ՋԻՆՎՈՐՆԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԵԿԵԼ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԻՑ

ՀՀ պաշտպանության նախարարությունը ներկայացնում է ադրբեջանական հարձակման ժամանակ հայ զինծառայողների բացառիկ խիզախության մի քանի դրվագներ: 2022 թ. սեպտեմբերի 13-ին ադրբեջանական զինուժի հարձակման ժամանակ N մարտական դիրքի ավագ, պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Տարոն Մհերի Գալոյանը, ճշգրիտ ուղղորդելով հրետանու կրակը, կասեցրել է թշնամու առաջխաղացումը, կրակային աջակցություն ցուցաբերել հարեւան դիրքերին: Մարտական դիրքի անձնակազմը պարբերաբար ճշգրիտ նշանացուցում է տվել հրաձգային գումարտակի ականանետային մարտկոցին թշնամու առաջխաղացումը կասեցնելու նպատակով, որի արդյունքում հետ են շպրտել հարձակվող զրոհային խմբերը՝ պատճառելով կենդանի ուժի մեծ կորուստներ:

Մարտական դիրքի անձնակազմը հմուտ ու վստահ գործողություններով ոչնչացրել է հակառակորդի զինամթերքի պաշարները, իսկ պարտադիր ժամկետային զինծառայող, սերժանտ Հովհաննես Ռոբերտի Հարությունյանը «ԿՈՐԴ» տեսակի գնդացրով դիպուկ կրակով ոչնչացրել է հակառակորդի կենդանի ուժն ու ամբողջությամբ այրել թշնամու հենակետը:

2022 թվականի սեպտեմբերի 13-ին ադրբեջանական զինված ստորաբաժանումների նախահարձակ գործողությունների ընթացքում N զորամասի դիվիզիոնի Դ-30 հրետանային մարտկոցը, կապիտան Արկադի Իշխանի Բարսեղյանի հրամանատարությամբ, զբաղեցրել է կրակային դիրքեր, անցել մարտական խնդրի կատարմանը եւ հակառակորդի կրակը վերցնելով իր վրա՝ ապահովել է մյուս ստորաբաժանումների մշտական տեղակայման վայրից անվտանգ դուրսբերումը դեպի կիրառման շրջաններ, տեղաշարժն ու բացազատումը:

Ռազմական գործողությունների ընթացքում հրետանային մարտկոցը դիպուկ կրակով բազմիցս կասեցրել է թշնամու գրոհային խմբերի եւ ռազմական տեխնիկայի առաջխաղացումը, ճնշել հրետանու կրակային դիրքերը՝ հասցնելով մեծաթիվ կորուստներ:

2022 թ. սեպտեմբերի 13-ին՝ ժամը 12:30-ի սահմաններում, հակառակորդը մեծաթիվ ուժերով շրջափակման մեջ է վերցրել N զորամասի պաշտպանության գոտու մարտական դիրքերից մեկը եւ անձնակազմից պահանջել վայր դնել զենքերը ու հանձնվել: Դասակի հենակետի պատասխանատու, լեյտենանտ Գեւորգ Կարենի Հարությունյանն ու դիրքի ավագ, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Հրայր Ապրեսի Ներկարարյանը, գնահատելով իրավիճակն ու չենթարկվելով թշնամու պարտադրանքին, խելամիտ եւ հմուտ գործողություններով հակառակորդին մոլորեցրել են եւ դուրս եկել շրջափակումից:

2022 թ. սեպտեմբերի 13-ին՝ ժամը 12:10-ի սահմաններում՝ տանկային եւ հրետանային ուժգին գնդակոծությունից հետո, թշնամին պաշտպանության գոտու N մարտական դիրքի աջ եւ ձախ ուղղություններով գրոհ է ձեռնարկել:

Գնահատելով իրավիճակը՝ մարտական դիրքի ավագ, պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Եսայի Յանեսի Արզիեւի հրամանատարությամբ անձնակազմը խելամտորեն իրականացնում է խուսավարում եւ զուգահեռաբար վերադաս հրամանատարությանն է փոխանցում նրանց կոորդինատները, ինչի արդյունքում մեր հրետանին դիպուկ համազարկերով ոչնչացնում է թշնամուն:

ՀԱՍՏԱՏՎԵՑ

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կառավարությունն իր սեպտեմբերի 29-ի նիստում հաստատեց Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եւ օգտագործման միջոցառումների 2023 թվականի տարեկան ծրագիրը:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ համալիր ծրագրի միջոցառումները, որոնք շարունակական բնույթ ունեն, ներառվում են տարեկան ծրագրում՝ կազմելով դրա մի մասը:

Համալիր միջոցառումների սահմանման սկզբունքներն են՝

1. Սեւանա լիճը եւ նրա ջրհավաք ավազանը, ըստ տարածքի գործառնական բնույթի, որպես մեկ ամբողջական համակարգ դիտարկելը,
2. Սեւանա լճի ջրային բացասական հաշվեկշռի բացառումը (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) եւ լճի էկոլոգիապես անհրաժեշտ մակարդակի բարձրացման ապահովումը,
3. կենսաբազմազանության պահպանության գերակայությունը,
4. Սեւանա լճի եւ նրա ջրհավաք ավազանի տարածքներում էկոլոգիապես մաքուր եւ անվտանգ տեխնոլոգիաների, այդ թվում՝ կենսատեխնոլոգիաների պարտադիր կիրառումը,
5. կարճաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ ծրագրերի մշակումը եւ դրանց բնապահպանական պետական, ինչպես նաեւ օրենքով սահմանված այլ փորձաքննության պարտադիր ապահովումը,
6. բնօգտագործման ավանդական ձեւերի խրախուսումը եւ աջակցումը:

Հաշվի առնելով վերջին շրջանում Սեւանա լճի էկոհամակարգի վիճակի վերաբերյալ անհանգստացնող հարցերի կարեւորությունը, դրանց ուսումնասիրման, պատճառների հայտնաբերման եւ կանխարգելիչ միջոցառումների իրականացման հրատապությունը՝ առանձնացվել են մի շարք միջոցառումներ՝ միտված լճի որակական եւ քանակական հիմնախնդիրների կարգավորմանը:

Ծրագրում ներառվել են ավելի քան 20 միջոցառումներ, որոնց իրականացման արդյունքում ակնկալվում է Սեւանա լճի էկոլոգիական հավասարակշռության վիճակի բարելավում, լճի եւ դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգերի կենսաբազմազանության պահպանություն եւ կենսապաշարների կայուն օգտագործման բարելավում, ափամերձ ջրածածկ տարածքներից անտառաշերտերի մաքրում, ապօրինի կառուցված շենք-շինությունների ապամոնտաժում, կեղտաջրերի մաքրման կայանների նախագծում եւ կառուցում, ռեկրեացիայի արդյունավետ զարգացում, «Սեւան» ազգային պարկի կառավարման համակարգի կատարելագործում, տարածքային զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերի մշակում եւ իրականացում եւ այլն:

Խիստ անհրաժեշտություն է առաջացել վերանայելու Սեւանա լճի մասին օրենսդրությունը, իրականացնելու գործող օրենսդրության, ներկա իրավիճակի վերլուծություն եւ գնահատում, գիտական հիմնավորումների եւ վերլուծությունների թարմացում, կլիմայի փոփոխության նկատմամբ էկոհամակարգի խոցելիության վերլուծություն եւ գնահատում, բացասական սցենարների նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների եւ առաջարկությունների ներկայացում:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 10-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ»

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԲՈՒՄ

«ԳեոՊրոՄայնինգը» շարունակում է համայնքներում համալրել կոմունալ ծառայությունների սպասարկման տեխնիկական պարկը:

Կայուն զարգացման ծրագրերի շրջանակում «ԳեոՊրոՄայնինգ գոլդ» ընկերությունը Արարատ համայնքի համար ձեռք է բերել էքսկավատոր-բեռնիչ «New Holland B80B» եւ բազմաֆունկցիոնալ կցորդիչներով տրակտոր «Բելարուս»: Էքսկավատոր-բեռնիչը նախատեսված է հողային, բեռնման- բեռնաթափման, գյուղատնտեսական աշխատանքների համար, օգտագործվում է դժվարանցանելի ճանապարհների բարեկարգման, ճանապարհների եւ խողովակաշարերի կառուցման համար: Վեց կցորդիչներով բազմաֆունկցիոնալ տրակտորը նախատեսված է համայնքի սանիտարահիգիենիկ չափանիշներն ապահովելու համար:

Նախագծերն իրականացվում են «Ռեսուրսներն ի բարօրություն» կորպորատիվ ծրագրի շրջանակներում, որը կոչված է ապահովելու «ԳեոՊրոՄայնինգ» ընկերությունների խմբի ներկայության մարզերի կայուն զարգացումը:

«Որպես պատասխանատու գործատու՝ մենք պարբերաբար խորհրդակցում ենք տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ որոշելու ամենաառաջնահերթ ծրագրերը: Մենք ուրախ էինք աջակցելու նախաձեռնություններին, որոնք ուղղված են համայնքի սոցիալական մակարդակի բարձրացմանը: Սա կօգնի մաքուր եւ կոկիկ պահել այն համայնքների եւ քաղաքների ճանապարհներն ու փողոցները, որտեղ ապրում են մեր աշխատողները», - մեկնաբանեց «ԳեոՊրոՄայնինգ գոլդ» ընկերության գլխավոր տնօրեն Անատոլի Գոգոտինը:

«ԳեոՊրոՄայնինգը» պարբերաբար ներդրումներ է կատարում կոմունալ տնտեսությունների զարգացման եւ սանիտարահիգիենիկ չափանիշների պահպանմանը աջակցելու համար: Ավելի վաղ ընկերությունը մի քանի աղբահավաք տեխնիկա եւ ավտոբուս էր գնել Արարատ համայնքի համար:

Ընկերության սոցիալական ներդրումները Հայաստանում գերազանցում են $ 15 մլն ԱՄՆ դոլարը:

ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝ ՏԱՎԱՐԱԲՈՒՅԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանում պետական ծրագրի շրջանակում տնտեսավարողները ձեռք են բերել շուրջ 1670 բարձրարժեք տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ, որոնց մոտ 20 տոկոսը բուծված է տեղում, իսկ մնացածը ներկրվել է:

Ծրագրի գլխավոր նպատակն է պայմաններ ստեղծել տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողների համար, որպեսզի կարողանան ձեռք բերել տոհմային բարձրարժեք, արտադրատնտեսական արժեքավոր հատկանիշներով օժտված խոշոր եղջերավոր կենդանիներ, մասնավորապես՝ 14-17 ամսական էգ հորթեր եւ երինջներ:

Ընդհանուր նախրում պետք է լինի տոհմային կորիզ, այսինքն՝ այնպիսի կենդանիներ, որոնք օժտված են բարձր գենետիկական ներուժով եւ բարձր մթերատվությամբ: Ծրագիրը տնտեսավարողներին հնարավորություն է տալիս ձեռք բերել այնպիսի կենդանիներ, որոնք կնպաստեն տեղում բուծվող կենդանիների մթերատվության բարձրացմանը: Ծրագրից կարող են օգտվել ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձինք: Դրա շրջանակներում ձեռք բերվող առավելագույն գլխաքանակը 300 գլուխ կենդանին է: Տրամադրվում է մինչեւ 300 մլն դրամի վարկ, այսինքն՝ մեկ կենդանու հաշվով վարկը կազմում է 1 մլն դրամ: Վարկի տոկոսադրույքը պետությունը սուբսիդավորում է այն չափաքանակով, որ տնտեսավարողի համար տոկոսադրույքը մնա կամ մի դեպքում 2 տոկոս, կամ մյուս դեպքում՝ 3 տոկոս: «Կառավարության կողմից հաստատվել է մի որոշում, որով փորձել ենք խթանիչ ֆունկցիա կիրառել, որ Հայաստանում զարգանա տոհմային վաճառքը: Այսինքն՝ եթե ձեռք են բերում Հայաստանում աճեցված տոհմային կենդանի, սուբսիդավորվում են այն չափաքանակով, որ իրենց համար տոկոսադրույքը կազմի 2 տոկոս: Իսկ եթե ներկրում են կենդանի, այդ դեպքում՝ 3 տոկոս: Սահմանամերձ համայնքների տնտեսավարողների եւ կոոպերատիվների համար վարկը հատկացվում է 0 տոկոսով, այսինքն՝ պետությունն ամբողջությամբ սուբսիդավորում է»:

Ծրագրի մեկնարկից ի վեր դրանից օգտվել է 26 շահառու, որոնք ձեռք են բերել 1670 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ: Վարկի ընդհանուր գումարը կազմել է 1 մլրդ 607 մլն դրամ: Պետությունը սուբսիդավորել է շուրջ 267 մլն դրամ: Ծրագրի շրջանակում ձեռք բերված գլխաքանակի 20 տոկոսը՝ շուրջ 330 գլուխ կենդանի, ձեռք է բերվել Հայաստանից: Ընդ որում, Տեր-Իսահակյանի խոսքով, ՀՀ են ներկրվել ճանաչված ցեղատեսակի կենդանիներ ինչպես եվրոպական երկրներից, այնպես էլ ՌԴ-ից, Ուկրաինայից:

Հայաստանում խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը 2022 թվականին կազմել է շուրջ 560 հազար գլուխ, այդ թվում՝ կովերի գլխաքանակը շուրջ 246 հազար: Հայաստանում մեկ կովի միջին կաթնատվությունը տատանվում է շուրջ 2450 կգ-ի սահմաններում:

Ծրագրի շրջանակում ձեռք բերված կենդանիներն իրենց մթերատվությամբ բավականին տարբերվում են ՀՀ-ում արձանագրված խոշոր եղջերավոր կենդանիների մթերատվության միջին ցուցանիշներից: Այդ կենդանիների մթերատվությունը գրեթե կրկնակի, որոշ դեպքերում՝ անգամ ավելի գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշները: Մասնագիտական տեսանկյունից չափազանց կարեւոր է նոր գենոֆոնդի եւ բարձր ներուժի ներկրումն ու օգտագործումը հետագա բուծման եւ տոհմային գործի մեջ:

Ծրագրի շրջանակում ձեռք բերված կենդանիների գենոֆոնդը հետագայում նաեւ կօգտագործվի տրամախաչումների միջոցով հանրապետության այլ կենդանիների արտադրատնտեսական որակի բարելավման համար:

«ՀՈՒՅՍ ՈՒՆԵՄ, ՈՐ ԿՔԱՅԼԵՄ»

ՇՈՒՇԻԻ ՄԱՐՏԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ

Նորայր Ավագյանը 44-օրյա պատերազմի մասնակից է, հենց առաջին օրերին կամավորագրվեց ու մեկնեց ճակատ: Վճռորոշ դարձան Շուշիի մարտերը. այնտեղ էլ վիրավորում ստացավ ողնաշարի հատվածում: Նորայրն այժմ տանը վերականգնողական վարժություններ է կատարում MetaGait սարքով:

«ՔայլՏեք» ընկերության նորարարական մարզասարքն օգնում է վերականգնել շարժունակությունը, ստեղծում է քայլքի իմիտացիա. VR ակնոցով եւ հատուկ մշակված խաղերով անձը տեղափոխվում է վիրտուալ իրականություն, որտեղ հնարավոր է դահուկ քշել, վազել կամ զբոսնել:

Նորայրին MetaGait-ը հասավ «Ակբա» բանկի աջակցության շնորհիվ:

«Շատ եմ ուզում քայլել, ապրել երազանքներով ու ապագային ուղղված նպատակներով: Մարզվելիս մոռանում եմ, որ չեմ քայլում, ու MetaGait-ի կարեւոր ֆունկցիան դա է. ես ոտքերս տեսնում եմ շարժելուց, տարվում եմ դահուկով, ու մեկ-մեկ թվում է, թե ցուրտն էլ եմ զգում: Ձոր եմ իջնում, դիմացս քարեր են, աջ ու ձախ եմ անում, շարժունակության համար շատ ընտիր բան է: Մարզվելիս ավելի առույգ եմ զգում, կարեւորը գլխուղեղը չմոռանա, որ ինքը նման ֆունկցիա ունի: Հույս ունեմ, որ կքայլեմ»,- նշում է Նորայր Ավագյանը:

«Մեզ համար կարեւոր էր, որ հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելիս մենք սովորեցնեինք այն ֆունկցիաները, որ ինքը կորցրել է: Հիմա, երբ հաշմանդամություն ունեցողն ամեն օր գոնե կես ժամ կանգնի սարքի վրա, իր մոտ մի շարք հիվանդություններ չեն առաջանա: «Ակբա» բանկի միջոցով մեր տղաներից մեկին կարողացանք ապահովել նման սարքով: Կա նաեւ MetaGait-ի հավելված, որտեղ երեւում է, թե ով որքան է քայլել, ինչ ճանապարհ է անցել ու որքան ժամանակում: Բժիշկը կարողանում է հետեւել, գրում է՝ ինչ փոփոխություններ կան»,- նշում է «ՔայլՏեք» ընկերության հիմնադիր Դավիթ Արսենյանը:

MetaGait-ն օգնում է խուսափել անշարժության հետեւանքով առաջացող ավելի քան 30 հիվանդությունից: MetaGait-ի հիմքում հեռավար ռեաբիլիտացիայի գաղափարն է:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը սեպտեմբերի 29-ին գեկույցով հանդես է եկել ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային բազմազանության եւ կայուն զարգացման համաշխարհային համաժողովի «Ժառանգությունը եւ մշակութային բազմազանությունը ճգնաժամի ժամանակ» թեմատիկ նիստում:

«Ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը ճգնաժամի ժամանակ» թեման չափազանց կարեւոր է եւ հաճախ պահանջում է միջազգային ներգրավվածություն: Հայաստանի համար շատ կարեւոր է ներկայումս Ադրբեջանի վերահսկողության ներքո գտնվող Լեռնային Ղարաբաղի (Արցախի) տարածքներում հայկական մշակութային ժառանգության պահպանման հարցը:

2020 թվականի նոյեմբերի 9-ից հետո Ադրբեջանի վերահսկողության տակ են անցել հայկական ավելի քան 2000 պատմամշակութային հուշարձաններ, ինչպես նաեւ 12 պետական թանգարաններ եւ պատկերասրահներ՝ 21000 նմուշներով: Այս պատմական վայրերի պահպանման հետ կապված լուրջ մտահոգություններ կան՝ հաշվի առնելով վերջին մի քանի տասնամյակների ընթացքում իր տարածքներում հայկական մշակութային ժառանգության համակարգված ոչնչացման՝ Ադրբեջանի հայտնի եւ փաստագրված պրակտիկան, օրինակ՝Նախիջեւանի դեպքում: Ադրբեջանն իրականացնում է Արցախում եւ մերձակա տարածքներում հայկական ներկայության պատմական ապացույցները բնաջնջելու քաղաքականություն հայկական հուշարձանների եւ մշակութային վայրերի միտումնավոր ոչնչացման միջոցով:

Արցախում 2020 թվականի 44-օրյա պատերազմից ի վեր Հայաստանը շարունակաբար իրազեկում է միջազգային հանրությանը Լեռնային Ղարաբաղում եւ սահմանին տիրող իրավիճակի մասին: 2022 թվականի սեպտեմբերի 13-ին Ադրբեջանը լայնածավալ ռազմական ագրեսիա է ձեռնարկել հայ-ադրբեջանական սահմանի մի քանի ուղղություններով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության Գորիս, Ջերմուկ, Վարդենիս, Կապան, Սոթք քաղաքների եւ հարակից գյուղերի ուղղությամբ:

Ադրբեջանական ագրեսիան հանգեցրել է հարյուրավոր մարդկային կորուստների, այդ թվում՝ Հայաստանի խաղաղ բնակչության շրջանում: Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքում Ադրբեջանի ռազմական հանցագործությունների պատճառով այժմ վտանգի տակ է գտնվում թիրախային շրջանների հարուստ մշակութային ժառանգությունը՝ ներառյալ ավելի քան 500 հուշարձան, 14 թանգարան՝45 000 նմուշներով:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից հավաքագրված տվյալների համաձայն՝Գեղարքունիքի, Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերից արդեն տեղահանվել է առնվազն 7600 հոգի: Այդ մարդիկ այժմ զրկված են իրենց հիմնական իրավունքներից, այդ թվում՝ մշակույթի հասանելիության իրավունքից, որը հակասում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին (հոդված 27), որտեղ ասվում է, որ յուրաքանչյուր ոք ունի հասարակության մշակութային կյանքին մասնակցելու, արվեստից բավականություն ստանալու, գիտական առաջընթացին մասնակցելու եւ նրա բարիքներից օգտվելու իրավունք:

Այսպիսով, ավելի արդիական է դառնում անդրադառնալ այս խնդրին եւ իրականացնել դեպի Լեռնային Ղարաբաղ եւ հարակից տարածքներ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տեխնիկական առաքելությունը:

Ժառանգությունը եւ մշակութային բազմազանությունը պետք է լինեն խաղաղ գործընթացի կարեւոր մասը: Այսպիսով, կոչ եմ անում միջազգային գործընկերներին իրենց ձայնն ու ներդրումն ունենալ Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում հազարամյա հայկական մշակութային եւ կրոնական ժառանգության պահպանման գործում:

Ցանկանում եմ ընդգծել, որ ժառանգությունը ճանաչվում է որպես կայուն զարգացման, երկխոսության եւ խաղաղության կարեւոր գործոն: Մենք խորապես հավատում ենք, որ մշակութային եւ ազգային ինքնությունների նկատմամբ հարգանքն ու հանդուրժողականությունը կապահովեն ազգերի համար խաղաղ եւ կայուն ապագա՝ ստեղծելու եւ հարստացնելու համաշխարհային ժառանգությունը»,- դիմելով անդամ պետությունների ներկայացուցիչներին՝ ասել է ՀՀ ԿԳՄՍ նախարարը:

Նիստին մասնակցել են Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Ուկրաինայի, Էկվադորի եւ այլ երկրների, ինչպես նաեւ «Մշակութային արժեքների պահպանության եւ վերականգնման ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի» բարձրաստիճան ներկայացուցիչները:

2022թ. սեպտեմբերի 28-30-ը Մեքսիկայի մայրաքաղաք Մեխիկոյում ընթանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային քաղաքականության եւ կայուն զարգացման համաշխարհային համաժողովը, որին մասնակցում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանի գլխավորած պատվիրակությունը: Հայաստանյան պատվիրակության կազմում են նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը եւ Մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստների վարչության պետ Աստղիկ Մարաբյանը:

«ՀԱՅԱՀԱՎԱՔ»

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԴԻՐԻԺՈՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կամերային երաժշտության ազգային կենտրոնի «Հայահավաք» նախագծի շրջանակում Հայաստանում ելույթ կունենա ամերիկահայ դիրիժոր Պետրոս Շեթիլյանը:

Համերգը տեղի կունենա սեպտեմբերի 30-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը: Համերգին դիրիժորը կղեկավարի Հայաստանի պետական կամերային նվագախումբը (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ ՀՀ վաստակավոր արտիստ Վահան Մարտիրոսյան):

«ԿԵԱԿ «Հայահավաք» նախագծի ընթացքում Հայաստանում ելույթ են ունենում հայազգի հանրահայտ արտիստներ, որոնք նախկինում որոշ պատճառներով դեռ ելույթ չեն ունեցել կամ ակտիվ ստեղծագործական գործունեություն չեն ծավալել հայրենիքում: Հայազգի դիրիժորներին ու մենակատարներին ներկայացնելով ու նրանց ձայնն ավելի լսելի դարձնելով՝ԿԵԱԿ-ը նպատակ ունի նոր թափ հաղորդել Հայաստանում մշակութային կյանքի զարգացմանն ու Հայաստան-սփյուռք մշակութային կապերի ամրապնդմանը»,- նշում է նախագծի համակարգող, Կամերային երաժշտության ազգային կենտրոնի փոխտնօրեն Արմեն Սուքիասյանը:

Սեպտեմբերի 30-ի համերգի ծրագրում Մոցարտի, Շոստակովիչի, Կոմիտաս/Ասլամազյանի եւ Դանիել Երաժշտի ստեղծագործություններն են:

Պետրոս Շեթիլյանն ավարտել է Սանկտ Պետերբուրգի կոնսերվատորիան (Յուրի Տեմիրկանովի դասարան): Նա աշխատել է միջազգային ճանաչում ունեցող այնպիսի նվագախմբերի հետ, ինչպիսիք են Սանկտ Պետերբուրգի ֆիլհարմոնիկը եւ Մոսկվայի կամերային նվագախումբը: Շեթիլյանը դիրիժորության բնագավառում ունեցած ձեռքբերումների համար պարգեւատրվել է Ռուսաստանի մշակութային հիմնադրամի մեդալով եւ պատվոգրով: Նա մասնակցել է մի շարք երաժշտական փառատոնների, ինչպիսիք են Մոսկվայի Ջատկի եւ Շվեդիայի Բորգհոլմսի միջազգային երաժշտական փառատոնները եւ շրջագայել է այնպիսի երկրներում, ինչպիսիք են Միացյալ Թագավորությունը, Շվեդիան եւ Ֆինլանդիան: Վերջերս Շեթիլյանը մասնակցել St. Petersburg Palaces International Music Festival-ին, որտեղ ղեկավարել է Մոցարտի Ռեքվիեմը եւ արժանացել քննադատների բարձր գնահատականին: Մեկ այլ հատկանշական իրադարձությունը Շեթիլյանի համերգն էր London Mozart Players-ի հետ Սուրբ Ջոն Սմիթ հրապարակում:

Պետրոս Շեթիլյանը նաեւ ձեռնադրվել է Հայ Առաքելական եկեղեցու քահանա եւ ներկայումս ապրում է ԱՄՆ-ի Մասաչուսեթս քաղաքում՝ համատեղելով իր երաժշտի եւ հոգեւորականի կոչումները:

ԼՈՒՐԵՐ

ՖՈՒՏԲՈԼԻՍՏԸ ՄՏԱՓՈԽՎԵԼ Է

Մոսկվայի «Լոկոմոտիվի» 23-ամյա պաշտպան Նաիր Տիկնիզյանը չի բացառել, որ կընդունի Հայաստանի ազգային հավաքականի հրավերը, եթե դարձալ ստանա: Մոտ կես տարի առաջ ֆուտբոլիստի գործակալը հայտնել էր, որ ռուսաստանցի ֆուտբոլիստը մերժել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հրավերը:

«Այո, ես ունեմ մարզական քաղաքացիությունս փոխելու իրավունք, բայց հարցը ցանկությունն է, դեռ ոչինչ չկա:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ կապի մեջ ենք: Ես նրանց վերաբերվում եմ առավելագույն հարգանքով:

Կյանքում ամեն ինչ կարող է փոխվել: Ես նրանց ասացի. «Եթե այսօր ասել եմ «ոչ», ապա վաղը կասեմ «այո»»: Ամեն ինչ կախված կլինի նրանց ընդունելիչընդունելուց: Բայց սա չի նշանակում, որ ինչ-որ բան տեղի կունենա:

Չգիտեմ՝ ինչ տեղի կունենա վաղը: Ապրում ենք այսօրվա օրով: Երեւի կես տարի առաջ են զանգել Հայաստանից: Ես ոչինչ չեմ սպասում: Հիմա ամենակարեւորը «Լոկոմոտիվն» է, իսկ հավաքականը հիմա երկրորդական է»,- Տիկնիզյանի խոսքը մեջբերում է Sport-express.ru-ն:

Տիկնիզյանը ծնվել է Սանկտ Պետերբուրգում: 2016-2021-ին եղել է Մոսկվայի ԲԿՄԱ-ի խաղացող: Նա հանդես է եկել Ռուսաստանի մինչեւ 19, 20, 21 տարեկանների հավաքականներում:

ՆՎԻՐՎԱԾ Է ՄՈԴԵԼԱՎՈՐՈՂԻՆ

WWD-ին մոտ կանգնած աղբյուրները պարզել են, որ առաջիկա Met Gala-ն նվիրված է լինելու հանգուցյալ մոդելավորող Կարլ Լագերֆելդին:

Միջոցառումը տեղի կունենա 2023 թվականի գարնանը:

Ցուցահանդեսին կներկայացվեն նրա ավելի քան 150 լուքեր՝ Chanel-ի, Balmain-ի, Patou-ի, Fendi-ի, Chloe-ի եւ իր համանուն հավաքածուի համար:

Fendi եւ Chanel նորաձեւության տների գլխավոր մոդելավորողը մահացել է 2019 թվականի փետրվարի 19-ին: Կարլ Լագերֆելդի մահը ցնցել է համաշխարհային նորաձեւության աշխարհի ներկայացուցիչներին:

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ԱՅՍՕՐ

ԱՄՆ-ի եւ Չինաստանի հավաքականները կվիճարկեն բասկետբոլի կանանց աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Ավստրալիայի Սիդնեյ քաղաքում ավարտին մոտեցող առաջնության կիսաեզրափակիչում ամերիկացիները 83:43 (27:7, 18:14, 22:8, 16:14) հաշվով առավելության հասան Կանադայի թիմի նկատմամբ:

Չինաստանի հավաքականը կիսաեզրափակչում մրցեց ավստրալացիների հետ եւ հաղթեց 61:59 (13:17, 23:17, 11:14, 14:15) հաշվով:

Եզրափակիչն ու երրորդ տեղի համար հանդիպումը տեղի կունենան հոկտեմբերի 1-ին:

● *Հոկտեմբերի 1-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Հինգ պատմություն՝սիրո մասին» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞r փաստաթղթերն են համարվում աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթեր:

Լուսինե Մկրտումյան (28 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մինչեւ 1992 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է կամ կառավարության սահմանած այլ փաստաթուղթ:

1992 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթը՝

1) աշխատանքային գրքույկն է կամ կառավարության սահմանած այլ փաստաթուղթ,

2) սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը, բացառությամբ կառավարության սահմանած դեպքերի:

Սոցիալական վճարներ կատարելը եւ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերի վավերապայմանները սահմանում է կառավարությունը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 2013 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածի աշխատանքային ստաժը հաստատվում է սույն օրենքով սահմանված տեղեկատվական շտեմարան ներառված տվյալների հիման վրա:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ սկզբունքով է կատարվում մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների նկատմամբ օրենքով արգելված գործողությունների կիրառումը:

Հայկ Իգիթյան (32 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Սույն օրենսգրքով արգելված դեպքերում մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցները, բնական մաշվածության հետեւանքով առաջացած փոփոխություններից բացի, այլ փոփոխությունների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ժամկետի երկարաձգման դեպքերի) ենթարկելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների եւ տրանսպորտային միջոցների համար «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 50 հազար դրամ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Ներմուծում մաքսային պահեստ» եւ «ներմուծում ազատ մաքսային պահեստ» ռեժիմներով բաց թողնված ապրանքների նկատմամբ այնպիսի գործողություններ իրականացնելը, որոնք հանգեցրել են այդ ապրանքների հատկանիշների եւ (կամ) նպատակային նշանակության փոփոխությանը, առաջացնում է տուգանքի նշանակում՝ ապրանքների մաքսային արժեքի տասը տոկոսի չափով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Սեպտեմբերի 30-ից մեկնարկել է Գրքի երեւանյան 5-րդ փառատոնը, որն այս տարի նվիրված է Վահագն Դավթյանի 100-ամյակին: Միջոցառումների շարքը կշարունակվի մինչեւ հոկտեմբերի 2-ը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.09.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: